ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5, Հեռ. 511703.

ՎԴ - _ Ե__

«**27**» **մայիսի 2019թ.**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ ՊԱՐՈՆ Ե. ԵՍՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եսոյան,

Ձեր կողմից 2019 թվականի մայիսի 20-ին կայացված թիվ ԵԱԴԴ/0872/02/11 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին որոշման կապակցությամբ տեղեկացնում եմ հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածի 23-րդ մասի համաձայն՝ 2019 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում վարվող բոլոր սնանկության գործերը մեկ ամսվա ընթացքում փոխանցվում են սնանկության դատարան, և (...):

«Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում:

Նշված իրավակարգավորմամբ սահմանվել է քաղաքացիական գործերի այն շրջանակը, որը ենթակա է քննության սնանկության դատարանի կողմից՝ սնանկության

գործի շրջանակում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Ընդդատության և ենթակայության մասին վեճերը» վերտառությամբ 26-րդ հոդվածի համաձայն.

1. Գործն ըստ տարածքային ընդդատության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը:

2. Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը:

3. Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

4. Սույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև վարչական դատարանի կողմից վերահասցեագրված գործի նկատմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական գործերը քննելիս դատարանի կողմից կիրառվող իրավունքը:

Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճելի հարաբերությունը կարգավորող նյութաիրավական օրենքի կամ այլ իրավական ակտի բացակայության դեպքում դատարանը կիրառում է նույնանման հարաբերություններ կարգավորող օրենքի նորմերը (օրենքի անալոգիա): Նման նորմերի բացակայության դեպքում դատարանը վեճը լուծում է՝ ելնելով իրավունքի ընդհանուր սկզբունքներից (իրավունքի անալոգիա): **Դատավարական նորմերն օրենքի անալոգիայով չեն կիրառվում**:

Տվյալ դեպքում վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածը և համարելով, որ այն կիրառելի է նաև այն դեպքերի համար, երբ վեճը վերաբերում է ենթակայության հարցերին՝ թիվ ԵԱԴԴ/0872/02/11 քաղաքացիական գործն ուղարկվել է Վճռաբեկ դատարանի նախագահին:

Մինչդեռ, ինչպես հետևում է նշված իրավակարգավորման տառացի մեկնաբանությունից, դատարանը որոշում է կայացնում գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ***տարածքային ընդդատությանը, իսկ որպես ենթակայության մասին վեճերի վերաբերյալ կարգավորում, նախատեսված է, որ սահմանված կարգը կիրառվում է վարչական դատարանի կողմից վերահասցեագրված գործի նկատմամբ:***

Հետևաբար, դատարանի կողմից կարող է որոշում կայացվել գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե՝

ա. դատարանը գործը ստացել է ըստ տարածքային ընդդատության, սակայն համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը,

բ. գործը վերահասցեագրվել է վարչական դատարանի կողմից և դրա կապակցությամբ առաջացել է վեճ:

Նշվածից հետևում է, որ օրենքով հստակ սահմանված են այն դեպքերը, որոնց պարագայում Վճռաբեկ դատարանի նախագահը կայացնում է որոշում՝ սահմանելով իրավասու դատարանը:

Մինչդեռ, քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Ձեր որոշման մեջ վերը նշված հիմքերից և որևէ մեկն առկա չէ, քանի որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քաղաքացիական գործը ստացվել է Սնանկության դատարանից: Ավելին, Ձեր կողմից կայացված որոշման բովանդակությունից հետևում է, որ Դուք ևս գտնում եք, որ օրենսդրությամբ սահմանված չէ գործի ենթակայության հետ կապված վեճի առաջացման դեպքում գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին դրույթ, հետևաբար, դատավարական նորմերի անալոգիայով կիրառման օրենսդրական արգելքի պարագայում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի դրույթները, դրանում չնշված, սակայն որոշակիորեն նույնանման հարաբերությունների նկատմամբ կիրառելի չեն: Հարկ է նշել նաև, որ Ձեր

կողմից կայացված որոշման պատճառաբանական մասում նշված այն հիմնավորումը, ըստ որի՝ Վճռաբեկ դատարանն ապահովում է օրենքների և այլ նորմատիվ-իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, ինչպես նաև վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները, տվյալ դեպքում վերաբերելի չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26–րդ հոդվածն ընդդատության և ենթակայության վեճերը լուծող իրավասու մարմին է դիտարկել ոչ թե Վճռաբեկ դատարանին, այլ Վճռաբեկ դատարանի նախագահին:

Ինչ վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդի 2018թ. հուլիսի 9-ի՝ «Դատավորների միջև գործերի հավասարաչափ բաշխման չափանիշները և կարգը, գործերի վերաբաշխման, կոլեգիալ դատական կազմերը ձևավորելու կարգը և դատավորներին հանձնվող գործերի կոնկրետ տոկոսաչափեր սահմանելու մասին» թիվ 23-Ո-49 որոշմամբ սահմանված կանոնների խախտմամբ քաղաքացիական գործը մակագրված լինելու հանգամանքին, ապա հարկ է նշել, որ այդ հարցի քննարկումը և ըստ էության լուծումը դուրս է Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունների շրջանակից:

Վերոգրյալի հաշվառմամբ, հիմք ընդունելով Սահմանադրության 6-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները՝ տեղեկացնում եմ, որ բարձրացված հարցերի քննարկումը և լուծումը դուրս է Վճռաբեկ դատարանի նախագահի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված լիազորությունների շրջանակից, որպիսի պարագայում և բացակայում է բարձրացված հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից համապատասխան որոշում կայացնելու օրենսդրական հիմքը:

Առդիր վերադարձվում է թիվ ԵԱԴԴ/0872/02/11 քաղաքացիական գործը՝ բաղկացած 8 հատորից (1-ին հատորը՝ 160 թերթ, 2-րդ հատորը՝ 114 թերթ, 3-րդ հատորը՝ 139 թերթ, 4-րդ հատորը՝ 115 թերթ, 5-րդ հատորը՝ 106 թերթ, 6-րդ հատորը՝ 117 թերթ, 7-րդ հատորը՝ 103 թերթ, 8-րդ հատորը՝ 8 թերթ):

Հարգանքով՝

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ